ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14.2 / [23149]-09

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՄԱՐԳՍՅԱՆԻ՝ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ
ԺԱՄԸ 11:00-ԻՆ «ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ ԿԱՅԱՑԱԾ ԱՅՑԻ

քաղ. Երևան

Մասնակցում էին՝

Գ. Պետրոսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Տ. Հարությունյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության գլխավոր մասնագետ
Հ. Գևորգյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն» ՊՈԱԿ տնօրեն
Ա. Երեմյան	«Պրոֆէքս» ՍՊԸ տնօրեն
Ա. Եղիազարյան	«Գլոբալինֆո»տեղեկատվական կենտրոնի տնօրեն

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն» ՊՈԱԿ –ի 2008-2009թթ. գործունեության արդյունքների մասին

(Հ.Գևորգյան, Ա. Երեմյան, Ա. Եղիազարյան, Գ. Պետրոսյան, Տ. Սարգսյան)

1. Նշել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն» ՊՈԱԿ–ի կատարած դրական աշխատանքը ՀՀ վարչապետի կողմից կենտրոն նախորդ այցելության ընթացքում արված դիտողությունների վերացման ուղղությամբ

2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Գ. Պետրոսյանին և ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանին՝ երիտասարդների մասնագիտական կողմնորոշման, նրանց դեպի աշխատաշուկա ուղղորդման աշխատանքները համակարգված իրականացնելու նպատակով՝

ա) մշակել և ստորագրել փոխհամագործակցության հուշագիր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն» ՊՈԱԿ–ի միջև:

բ) կազմել հանրակրթական դպրոցների համապատասխան ուսուցիչների «Երտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն» ՊՈԱԿ–ի մասնագետների միջոցով վերապատրաստման ժամանակացույց:

3. ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարար Գ. Պետրոսյանին՝ մշակել և համապատասխան ընթացակարգով ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել «Կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

4. Առաջարկել ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահ Մ. Բաղալյանին՝ ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգում առկա թափուր պաշտոնների մրցույթների հայտարարությունները հրապարակման նպատակով տրամադրել նաև զբաղվածության ոլորտում ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Arcanagrut-21.10.09-1